


«Հաստատում եմ» _____



Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական

համալսարանի ռեկտոր Ե. Սերոբյան

«15» հունվարի 2025թ.



ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Սիրանուշ Էդուարդի Ղազարյանի «Ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման ռազմավարությունը անգլերենի ուսուցման ընթացքում» վերնագրով ԺԳ.00.02 թվանիշով, «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (անգլերեն լեզու)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին:

Ժամանակակից աշխարհն իր սրընթաց փոփոխություններով լայն հնարավորություններ է ստեղծում հաղորդակցման և հարաբերությունների հաստատման համար տարբեր երկրների հետ, որն առաջնային է դարձնում օտար լեզուների տիրապետումը և այն իր հերթին պահանջում է նոր մոտեցումներ՝ օտար լեզուների մեթոդական համակարգին, որոնք միտված են սովորողների լեզվահաղորդակցական կարողությունների զարգացմանը: Ինչպես հայտնի է, ներկայումս մի քանի օտար լեզուների տիրապետումը կենսական նշանակություն է ձեռք բերել, քանի որ աշխարհում, կրթության ոլորտում տեղի ունեցող արագընթաց փոփոխությունները տանում են դեպի միջազգային հարաբերությունների հաստատման, միջմշակութային հաղորդակցման ապահովման անհրաժեշտության և հեռահաղորդակցման: Ուստի, մի քանի լեզվով արդյունավետ հաղորդակցումը և փափուկ հմտությունների ձեռք բերման կարևորությունը ժամանակակից աշխարհում

դարձել են դասավանդման և ուսումնառության նոր մոտեցումների հիմնաքարը: Այսօր բարձրագույն ուսումնական հաստատությունները գնալով ավելի շատ թվով դասավանդվող օտար լեզուներ են ապահովում ուսանողների համար: Հետևաբար, սույն հետազոտության արդիականությունը լիովին հիմնավորված է ժամանակակից աշխարհի պահանջներին զուգընթաց և կրթության ոլորտի զարգացման, ոլորտում իրականացվող բարեփոխումների անհրաժեշտությամբ: Արժևորելով հետազոտության արդիականությունը նշենք, որ սույն հետազոտության թեմայի շրջանակներում փորձ է արվել բացահայտելու բարձրագույն ուսումնական հաստատություններում անգլերենի՝ որպես երրորդ օտար լեզվի ուսուցման գործընթացում ուսանողների բազմալեզու կարողությունների տիրապետման առկա դժվարությունները և մշակելու դրանց զարգացմանն ուղղված ռազմավարության մոդել: Յուրաքանչյուր օտար լեզվի արագ և արդյունավետ յուրացմանը նպաստող ռազմավարության մոդելի ստեղծումը կարող է ապահովել բուհերում ուսանողների բազմալեզու կարողությունների զարգացումը՝ հիմնված ճանաչողական հաղորդակցման մոտեցման վրա:

Արդի շրջանում ոչ միայն մեկ, այլ մի քանի լեզուների տիրապետելու հարցը ձեռք է բերում կենսական մեծ նշանակություն: Եվ այս արժևորմամբ գերակա խնդիրը չի կարող անտեսվել բուհերի տարբեր օտար լեզուների համընթաց և կամ հաջորդական դասավանդման գործընթացում: Այս դիտանկյունից անվիճելի է դառնում սույն հետազոտության արդիականությունը:

Աշխատանքում փորձ է արվում մշակելու մեթոդական համակարգ անգլերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի ուսուցման համար, մասնավորապես ստեղծել ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման ռազմավարության ընդհանուր կաղապար, որը կիրառելի կլինի նաև այլ լեզուների համադրման ժամանակ: Հետաքրքրականն այն է, որ այս ներկայացվող մոդելում երրորդ օտար լեզվի ուսուցումը չի դիտարկվում որպես մի նոր օղակ, այլ այն արդեն իսկ ուսանողի կողմից նախկինում ձեռք բերած լեզուների, կարողունակությունների կիրառությունն է նոր շղթայում, իսկ այս շղթայի տրամաբանական շարունակականությունն է արդեն իսկ կայացած հին օղակների, որոնք հանդիսանում են նախահենք նոր օտար լեզուների դասավանդման գործընթացում: Այլ կերպ ասած՝ երկու, երեք լեզուներով ուսուցումը ոչ թե տարանջատվում է, այլ կերտվում է մեկ ամբողջականության մեջ՝

ապահովելով համակարգայնություն: Այստեղից էլ հստակորեն ուրվագծվում է աշխատանքի նպատակը և վարկածը՝ ձևավորել ու զարգացնել ուսանողի բազմալեզու կարողունակություն: Անմիջապես ասեք, որ այն հեղինակին հաջողվել է:

Բազմալեզու կարողունակության ներկնապնակը հարուստ է, քանի որ հնարավորինս կիրառվում են ներկնապնակի բոլոր գույները՝ ուսանողների լեզվահաղորդակցական, ճանաչողական-հաղորդակցական, վերձանչողական կարողությունները աղյուսվում են միջլեզվական փոխազդեցության ոլորտներին:

Աշխատանքում հստակ ներկայացված է ստենախոսության հիմնախնդրի մշակվածության աստիճանը, նաև նշվում են ՀՀ-ում կատարված հետազոտությունները:

Աշխատանքը նաև ապահովում է հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը, աշխատանքում ներկայացվում է հետազոտության փորձարարական բազան, նկարագրվում է հետազոտության արդյունքների փորձաքննության իրականացումը:

Հիմնավորված են նմանապես հետազոտության տեսական, էմպիրիկ, վիճակագրական մեթոդների ընտրությունը: Իսկ առաջադրված նպատակն ու հստակորեն սահմանված խնդիրները որոշարկում են աշխատանքի կառուցվածքը: Նշենք, որ գիտահետազոտական ապարատի բոլոր բաղադրիչները փոխկապված և փոխապայմանավորված են:

Ատենախոսությունը բաղկացած է երկու գլխից, որոնցում առաջադրված հարցերի տրամաբանական ուսումնասիրությունը, վերլուծությունն ու քննությունը հանգեցնում են գլխավոր հիմնախնդրի հանգուցալուծմանը:

Աշխատանքի առաջին գլուխը, որը կրում է «Ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման առանձնահատկությունները» վերնագիրը, կազմված է երեք ենթագլխից, որտեղ մանրամասնորեն վերլուծվում են ուսանողների բազմալեզու կարողությունների զարգացմանը վերաբերող տարբեր հեղինակների մոտեցումները, ինչպես նաև սահմանվում են հիմնական հասկացությունները: Հեղինակը՝ վերլուծելով երրորդ օտար լեզվի ուսուցման առանձնահատկությունները, հատկապես շեշտում է ուսանողների վերլեզվական, վերձանաչողական, սոցիալական կարողությունների ակտիվության դերն կարևորությունը: Անդրադարձ է արվում ուսանողների բազմալեզու և

բազմամշակութային կարողությունների սերտաճմանը, ուրվագծվում են բազմալեզվության «հետընթաց», «առաջընթաց», «հետընթաց-առաջընթաց» դրսևորումները: Տրամաբանության թելադրանքով վերծանվում է «միջլեզվային փոխազդեցության» հասկացությունը և դրա տեսակները, որոնք խիստ կարևոր են լեզուների ուսուցման գործընթացում:

Ատենախոսության երկրորդ «Միջլեզվային փոխազդեցությունները երրորդ օտար լեզվի ուսուցման գործընթացում» գլխում հեղինակն անդրադառնում է միջլեզվային փոխազդեցությունների գործոններին, ներկայացնելով դրանց տեսակները: Առանձին մակարդակներով տրվում է ուսանողների բազմալեզու կարողությունների զարգացման ռազմավարության մոդելը, որը ներկայացվում է աշխատանքում ուշագրավ գծապատկերով: Գրագետ կերպով ներկայացված է ռազմավարությունների ամփոփ նկարագրությունը, որում սահմանված են յուրաքանչյուրի նպատակը, կիրառելի մեթոդները, առաջադրանքները, դիդակտիկ նյութերը, թվային այն գործիքները, որոնք կնպաստեն առաջադրված նպատակի արդյունավետ իրականացմանը:

Գնահատելի է հեղինակի կողմից ներկայացված ռազմավարական մոդելի արդյունավետության փորձարկմանը վերաբերող նախապատրաստական աշխատանքների նկարագրությունը, կատարված վերլուծություններն ու պարզաբանումները: Մանրակրկիտ ներկայացված է փորձարարական ուսուցումը, արդյունքների վերլուծությունները, տրվում են հիմնավորումներ:

Հետազոտական աշխատանքի եզրակացություններն ամփոփում են առաջադրված խնդիրների լուծումները, դրանք հիմնավորված են և հստակ ներկայացված:

Սույն հետազոտությունը անկասկած կլրացնի բուհերում բազմալեզու կարողունակությունների զարգացման տեսական հենքը՝ առաջադրված հարցերի նոր դրույթային մոտեցմամբ, իսկ ներկայացված համընդհանուր ուսուցման մոդելը կարող է իր կիրառությունը գտնել նաև այլ լեզուների ուսուցման ոլորտում:

Աշխատանքի վերաբերյալ կան հետևյալ դիտարկումները.

- Հայտորոշիչ թեստավորման արդյունքնում ի հայտ եկած փոխներթափանցման արդյունքում գրանցված սխալները ունեն մեծ նշանակություն: Այս բոլոր դեպքերում մայրենիի դերը մեծ է: Ինչ վերաբերվում է Հայաստանի բուհերում

անցկացված թեստավորմանը, մեզ համար ընդունելի ու հասկանալի է: Սակայն Չեխիայի ու Ռումինիայի համապատասխան բուհերում կազմակերպված հայտորոշիչ թեստավորումը կարծես թե դառնում է ոչ այնքան հուսալի, քանի որ դրանցում բացակայում է մայրենին: Որքան էլ որ փոխներթափացումը (միջլեզվային փոխազդեցությունը) վերաբերում է ֆրանսերենին ու անգլերենին, սակայն մայրենին բոլոր դեպքերում կարծես թե բովանդակում է իր մեջ բոլոր լեզուների միջլեզվային փոխներթափանցումները:

- Աշխատանքում կարելի էր մի փոքր անդրադառնալ առաջադրված հիմնախնդրի դրվածքին հանրակրթության ոլորտում:

Վերոնշյալ դիտարկումները չեն ստվերում սույն հետազոտության գիտական արժեքը:

Հետազոտական նյութն ամբողջական է: Աշխատանքը համակարգված է, ներկայացված տրամաբանական հաջորդականությամբ, շարադրված է հստակ, մեջբերումները և հղումները ներկայացված են կանոնակարգված: Ուսումնասիրված է արդիական և բավականին հարուստ գրականություն: Առկա է արված ուսումնասիրության հիմնովին համապատասխանություն մասնագիտական ուղղվածությանը: Սույն հետազոտության շրջանակներում մշակված բազմալեզու կարողությունների մոդելը կարող է ներդրվել ինչպես անգլերենի, այնպես էլ այլ օտար լեզուների ուսուցման գործընթացում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս դիտարկումները չեն ստվերում սույն հետազոտության գիտական արժեքը: Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին և Սիրանուշ Էդուարդի Ղազարյանը արժանի է իր հայցած ԺԳ.00.02 թվանիշով, «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (անգլերեն լեզու)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընդունվել է 2025թ. հունվարի 13-ի «Մանկավարժություն» և «Օտար լեզուներ և գրականություն» ամբիոնների համատեղ թիվ 1 նիստում:

